ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՏԱԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Տարոն Սիմոնյանի,

քննության առնելով փաստաբան Գարի Գևորգյանի դիմումի հիման վրա «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կիրառման վերաբերյալ ոչ պաշտոնական պարզաբանում տալու մասին հարցը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի, 87-րդ հոդվածի պահանջները, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- ***Հաստատել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կիրառման վերաբերյալ ոչ պաշտոնական պարզաբանումը՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

17 նոյեմբերի 2017թ.
թիվ 22/12-Լ
ք. Երևան